ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3
№ ՀԲՄԾՁԲ-7/2-12 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02-ը ապրիլի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Արամ Եգանյան և ընկերներ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Եգանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 07.03.2018թ. կնքված № ՀԲՄԾՁԲ-7/2-12 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով կողմերը որոշեցին Ճամբարակի տարածաշրջանի հացաթխման ծառայության մատուցման միավորի գինը նվազեցնել և սահմանել 98 ՀՀ դրամ:

1.2 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հացաթխման ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **3 292 898 (երեք միլիոն երկու հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր իննսունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,** որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 20.12.2019թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Վաճառողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արամ Եգանյան և ընկերներ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Գեղարքունիքի մարզ ք. Ճամբարակ Գ.Նժդեհի 1/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ, Ճամբարակի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16023100061500
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 08612369
ՀՀ պաշտպանության նախարար տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԵԳԱՆՅԱՆ

Հավելված N 1
№ ՀԲՄԾՁԲ-7/2-12 գնման պայմանագրի N3 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Չ/մ	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/	Ծառայությունների մատուցումը ըստ կիսամյակների 2019թ.
						1-ին կիսամյակ
1	**Ճամբարակի տարածաշրջան, այդ թվում**	կգ	**33601**	**98**	**3292898**	**33601**
1	Ճամբարակ - 25836 զորամաս	կգ	33601	98	3292898	33601

Հավելված N 2
№ ՀԲՄԾՁԲ-7/2-12 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Հացաթխման ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	*Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.								
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	**Ճամբարակի տարածաշրջան, այդ թվում**	**1646400**	**3292898**	**3292898**	**3292898**	**3292898**	**3292898**	**3292898**	**3292898**	**3292898**
1	Ճամբարակ - 25836 զորամաս	1646400	3292898	3292898	3292898	3292898	3292898	3292898	3292898	3292898

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:* CPV-ի կոդը՝ 98391170/48/15/1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՍԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Արամ Եգանյան և ընկերներ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ ք. Ճամբարակ Գ.Նժդեհի 1/1
«ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ, Ճամբարակի մ/ճ
Հ/Հ 16023100061500
ՀՎՀՀ 08612369

տնօրեն

Ա. ԵԳԱՆՅԱՆ